ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«19»«12» 2011թ.
թիվ «8»-Ն

ՈՐՈՇՈՒՄ

ՄԱՍԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 Թ – Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

ԱՌԱՋՆՈՐԴՎԵԼՈՎ « ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՎ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Մասիս գյուղական համայնքի 2012 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

/ դրույքաչափերը կցվում են /

կողմ - 7, ձեռնպահ – 0, դեմ – 0

Ավագանու անդամներ՝

Վ. Հակոբյան կողմ
Գ. Մելքոնյան կողմ
Ն. Մխիթարյան կողմ
Ս.Սարգսյան կողմ
Գ.Խաչատրյան կողմ
Գ.Գալստյան կողմ
Վ.Օհանյան կողմ

Համայնքի ղեկավար՝ Ս.Մարգարյան

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 թ – ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծի համապատասխան [illegible] շենքերի,շինությունների(ներառյալ ոչ հիմնական) շինարարության [illegible] թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է .

Հիմնական օբյեկտների համար

1) մինչև 300 քառ.մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային տների) , ինչպես նաև մինչև 200 քառ.մ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ:

2) սույն կետի « 1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար

ա) 201 –ից մինչև 5000քառ.մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 30000 դրամ

բ) 501 – ից մինչև 1000 քառ.մ ընդհանուր մակերես ունեցող [illegible] համար ՝ 50000 դրամ

գ) 1001 և ավելի քառ.մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 70000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների
տեղադրման համար

3) մինչև 20 քառ.մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ՝ 3000 դրամ

4) 20 և ավելի քառ. մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 5000 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգման արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվության չպահանջվող դեպքերի համար) , եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
, չի նախատեսվում կցակառույցների ,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն ՝ 3000 դրամ:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի ,շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է ՝ 5000 դրամ:

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքի թույլտվության համար , հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում , յուրաքանչյուր եռամսյակի համար ՝ 3000 դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար ՝ 3000 դրամ:

5. Համայնքի տարածքում ՝

1) բացօդյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ :

2) հեղուկ վառելիքի , տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար՝ 150000 դրամ:

6. Համայնքի տարածքում խաղատները հանրային սննդի օբյեկտները , բաղնիքները (սաունաները) , զվարճանքի օբյեկտները ժամը 24 .00 –ից հետո աշխատելու թույլտվություն ընթացիկ տարվա համար սահմանվում է ՝

1) առևտրի օբյեկտների համար ՝ 25000 դրամ
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար ՝ 60000
3) բաղնիքների , սաունաների համար՝ 300000 դրամ
4) խաղատների համար ՝ 700000 դրամ
5) շահումներով խաղերի կազամակերպման համար ՝ 300000 դրամ
6) վիճակախաղերի կազմակերպման համար ՝ 100000 դրամ

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը սահմանվում է ընթացիկ տարվա համար ՝ 2000 դրամ:

Տեղական վճարներ

1. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար ՝ 1000 դրամ :

2. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխելու , վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական և տնտեսական պայմաններ մշակելու և հաստատ շինարարության ավարտը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 դրամ:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կախված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից՝ 1000 դրամ :

Սույն որոշման 1,2,3 կետերով սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառել 0,5 գործակիցը :

Համայնքի ղեկավար Ս.Մարգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«26»«12» 2011թ.
թիվ «9/ »-Ն

ՈՐՈՇՈՒՄ

ՄԱՍԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 Թ –Ի ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ :

ԱՌԱՋՆՈՐԴՎԵԼՈՎ « ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 16 - ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3 - ՐԴ ԿԵՏԻ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՎ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Մասիս գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեն:

/ բյուջեն կցված /

կողմ - 7, ձեռնպահ – 0, դեմ – 0

Ավագանու անդամներ՝

Վ. Հակոբյան կողմ
Գ. Մելքոնյան կողմ
Ն. Մխիթարյան կողմ
Ս.Սարգսյան կողմ
Գ.Խաչատրյան կողմ
Գ.Գալստյան կողմ
Վ.Օհանյան կողմ

Համայնքի ղեկավար՝ Ս.Մարգարյան

1. 2012թ –ի Մասիս համայնքի բյուջեի հաստատումը :

Լսեցին - // - Մասիս համայնքի 2012 թ –ի բյուջեի հաստատման մասին:

/ Զեկ. համայնքի առաջատար մասնագետ՝ Շ.Դավթյանը /

Արտահայտվեցին - // - Ն.Մխիթարյանը ,Վ.Հակոբյանը ,Գ.Մելքոնյանը, Ս.Սարգսյանը և Գ.Խաչատրյանը :

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 16 -րդ 3 -րդ կետի պահանջներով՝

Ավագանին որոշում է՝

1. Հաստատել Մասիս համայնքի 2012 թ - ի բյուջեն

Եկամուտների գծով	21743,0
Ծախսերի գծով	21743,0
Դոտացիա	15177,0

2. Հաստատել Մասիս համայնքի 2012 թ – ի եկամուտներից ըստ առանձին եկամտատեսակների հետևյալ չափերով

2.1.Հարկային եկամուտներ 5066,0

նույն թվում

հողի հարկ	3500,0
գույքի հարկ	1400,0
տեղական տուրք	166,0

2.2. Ոչ հարակային եկամուտներ	1050,0
վարձակալությամբ հողեր	450,0
դոտացիա	15177,0

3. Հաստատել համայնքի 2012 թ – ի բյուջեից հատկացումներ, ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման հետևյալ չափերով՝

Համայնքի ղեկավարի աշխատակազմ

որից՝

աշխատավարձ	11800,0
աշխ. վերադիր	2600,0
տնտեսական	250,0
տրանսպորտ	500,0
կապի ծառայություն	200,0
էլ.էներգիա	800,0
ջրմուղ կոյուղի	115,0
պահուստային ֆոնդ	680,0
այլ նպաստներ	2800,0
տեղեկատվական ծառայություն	150,0
վարչական ծառայություն	150,0
նվիրատվություն « Օլիմպիկ» հիմնադրամին	150,0

դեմ - չկա, կողմ – 7 , ձեռնպահ - չկա

ավագանու անդամներ՝

Գ. Մելքոնյան
Գ.Գալստյան
Վ.Օհանյան
Գ.Խաչատրյան
Վ.Հակոբյան
Ս.Սարգսյան
Ն.Մխիթարյան

Համայնքի ղեկավար՝ Ս.Մարգարյան